ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» դեկտեմբերի 2019 թվականի N 801-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել Վարդան Աշոտի Առաքելյանին և Աննա Ալիկի Հովհաննիսյանին՝ շարունակելու ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 62 հասցեի հողակտորում 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 40 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» դեկտեմբերի 2019 թվականի N 802-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 784-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հաշվի առնելով Մարատ Զաքարի Գրիգորյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 26-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 784-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1)որոշման 1-ին կետում «խանութի վերակառուցման» բառերից հետո լրացնել «և երկրորդ հարկում բնակելի տան կառուցման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 6
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2019 թվականի N 803-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ձորաղբյուր գյուղի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 19-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Կարեն Գուրգենի Դավթյանին և Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0053 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 1000,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17102019-07-0115, տրված 2019 թվականի հոկտեմբերի 17-ին):

2.Քաղաքացիներ Կարեն Գուրգենի Դավթյանին և Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0384-0053 կադաստրային համարի 1000,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին թաղամաս, թիվ 33:

3.Առաջարկել Կարեն Գուրգենի Դավթյանին և Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 4 468 500 (չորս միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Աշխատակազմի գլխավոր մասնագետ Լևոն Մխիթարյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Կարեն Գուրգենի Դավթյանին և Հայկ Հովհաննեսի Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2019 թվականի N 804-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հաշվի առնելով Հովհաննես Գուրգենի Հովհաննիսյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2018 թվականի նոյեմբերի 26-ի «Շինարարության թույլտվություններ տալու մասին» թիվ 67-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 3-րդ կետում «երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինությունների» բառերը փոխարինել «նկուղային և մանսարդային հարկերով բնակելի տան, օժանդակ շինության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«9» դեկտեմբերի 2019 թվականի N 805-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել Վալերիկ Գուրգենի Վարդանյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 3-րդ այգետարածքի 14-րդ տեղամասի թիվ 20 հասցեի հողակտորում 2017 թվականի հունիսի 8-ի թիվ 7 շինարարության թույլտվությամբ բնակելի տան վերակառուցման շինարարական աշխատանքները՝ համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 9
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» դեկտեմբերի 2019 թվականի N 806-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-դ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Ստեփանի Մանուկյանին՝ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 48 հասցեում զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունը հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուզաննա Ստեփանի Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» դեկտեմբերի 2019 թվականի N 807-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Սերգեյ Ահարոնի Զաքարյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1.Սերգեյ Ահարոնի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 44-րդ փողոցի թիվ 27 և 44-րդ փողոցի թիվ 29 հասցեների հողակտորները միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 44-րդ փողոց, թիվ 27,29:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Սերգեյ Ահարոնի Զաքարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» դեկտեմբերի 2019 թվականի N 808-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել Արամ Յուրիկի Հարությունյանին՝ շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 46-րդ փողոցի թիվ 62/1 հասցեի հողակտորում 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 41 շինարարության թույլտվությամբ տրված բնակելի տան կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 12-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» դեկտեմբերի 2019 թվականի N 809-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի ԹԻՎ 477-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի պահանջներով և հաշվի առնելով Հովհաննես և Վահե Պողոսյանների, Գոհար Կարապետյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 5-ի «Շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 477-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1)որոշման 1-ին կետում «այգետնակի վերակառուցման» բառերը փոխարինել «այգետնակը՝ անհատական բնակելի տան վերակառուցման» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» դեկտեմբերի 2019 թվականի N 810-Ա

ԶԻՆԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 4-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները, Ջրվեժ համայնքի սոցիալական խնդիրների ուսումնասիրման հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 10-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 2 տան բնակիչ Զինա Խաչատուրի Պետրոսյանի ընտանիքի վերաբերյալ, այն է՝ Զինա Խաչատուրի Պետրոսյանի ընտանիքը ներկայումս երկու անձ է, ինքը և ամուսինը՝ Սարո Տաճատի Պետրոսյանը չեն աշխատում, թոշակառուներ են, ընդ որում՝ Սարո Պետրոսյանն ունի սրտի հետ կապված խնդիրներ, տարել է սրտի կաթված, 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառու է, գտնվում է երկարատև դեղորայքային բուժման մեջ և ընտանիքի ֆինանսական վիճակից ելնելով Զինա Խաչատուրի Պետրոսյանը դիմել է համայնքապետարան՝ դրամական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

1.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Զինա Խաչատուրի Պետրոսյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Զինա Խաչատուրի Պետրոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 11
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N 811-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 16-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 61-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից 2020 թվականի հունվարի 16-ին, ժամը 14:00-ին կազմակերպել աճուրդային վաճառք՝ համաձայն թիվ 1 հավելվածով հաստատված ելակետային տվյալների, մեկնարկային գների, նախավճարի և քայլի չափի:

2. Հաստատել հրապարակային ծանուցման տեքստը, համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Հանձնարարել Ջրվեժի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված աճուրդով օտարման ենթակա հողամասերի հրապարակային ծանուցման հրապարակումը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում, www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և սահմանված կարգով ապահովել աճուրդի անցկացումն ու արդյունքների ամփոփումը:

4. Աճուրդի վարման համար աճուրդավար նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Սանթրոսյանին:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 12
գ. Ջրվեժ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2019 թվականի
դեկտեմբերի 12-ի N 811-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Լոտի հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Ճանապարհների, ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը (դրամ)	Նախավճարի չափը (դրամ)	Քայլի չափը (դրամ)
1	Ջրվեժ համայնք, Զորաղբյուր գյուղ 9-րդ փողոց, թիվ 12/1 07-042-0373-0007	0.03791	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	1800000	90000	90000
2	Ջրվեժ համայնք, Զորաղբյուր գյուղ Այգեգործական զանգված 7/1 07-042-0217-0034	0.04228	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	չկա	-	չկա	2000000	100000	100000
3	Ջրվեժ համայնք, Զորաղբյուր գյուղ 07-042-0406-0017	0.1208	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	ջրովի IV կարգ	չկա	300000	15000	15000
4	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 07-057-0368-0012	5.0	գյուղատնտեսական, այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	չկա	այլ հողատեսք	չկա	5500000	275000	275000
5	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 16-րդ փողոց, թիվ 28 07-057-0361-0046	1.99627	բնակավայրի հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	արգելվում են բնակելի տների, դպրոցների, նախադպրոցական, առողջապահական և հանգստի գոտիների կառուցումը:	չկա	-	չկա	91000000	4550000	4550000

Հավելված 2
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի
ղեկավարի 2019 թվականի
դեկտեմբերի 12-ի N 811-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջրվեժի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի դասական աճուրդ

Լոտի հ/հ	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հեկտար	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ սերվիտուտների) առկայությունը	Գյուղատնտեսական հողերի դեպքում՝ հողի որակական հատկանիշները, ագրոտեխնիկական պայմանները, հողատեսքը*	Մեկնարկային գինը (դրամ)
1	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 9-րդ փողոց, թիվ 12/1 07-042-0373-0007	0.03791	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	-	1800000
2	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ Այգեգործական զանգված 7/1 07-042-0217-0034	0.04228	բնակավայրի բնակելի կառուցապատման	բնակելի տան կառուցման համար	չկա	-	2000000
3	Ջրվեժ համայնք, Ձորաղբյուր գյուղ 07-042-0406-0017	0.1208	գյուղատնտեսական, վարելահող	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	ջրովի IV կարգ	300000
4	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 07-057-0368-0012	5.0	գյուղատնտեսական, այլ	գյուղատնտեսական գործունեության համար	չկա	այլ հողատեսք	5500000
5	Ջրվեժ համայնք, Ջրվեժ գյուղ 16-րդ փողոց, թիվ 28 07-057-0361-0046	1.99627	բնակավայրի հասարակական կառուցապատման	հասարակական նշանակության օբյեկտի կառուցման համար	կան*	-	91000000

*Արգելվում են բնակելի տների, դպրոցների, նախադպրոցական, առողջապահական և հանգստի գոտիների կառուցումը:
Ճանապարհներ, ջրատար, կոյուղի, էլեկտրահաղորդման գծեր, գազատար՝ չկան:
Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:
Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, Մելքոնյան փողոց 76:
Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:
Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ջրվեժի համայնքապետարան (Մելքոնյան փողոց 76, 2-րդ հարկ, հեռախոս 010-684929):
Աճուրդը կայանալու է 2020 թվականի հունվարի 16-ին ժ. 14:00-ին, Ջրվեժի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:
Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2020 թվականի հունվարի 13-ը, ժամը 14:00-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N 812-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.«Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արսեն Մանուկյան, հողամասի կառուցապատման իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Երևան-Գառնի մայրուղու թիվ 6/12 և թիվ 6/14 հասցեի հողամասերում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ուղղաթիռային կայանի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արսեն Մանուկյան, որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N 813-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ռուբեն Սերգեյի Հակոբյանին տալ կիսանկուղային հարկով երկհարկանի բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 27-րդ փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Ռուբեն Սերգեյի Հակոբյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Ռուբեն Սերգեյի Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» դեկտեմբերի 2019 թվականի N 814-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Իվան Միխաիլովիչ Գալկինի տալ նկուղային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման և պարսպապատման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 1-ին թաղամասի թիվ 8/1 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Իվան Միխաիլովիչ Գալկինին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Իվան Միխաիլովիչ Գալկինին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 12
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
010-684929, 060-535553 jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» դեկտեմբերի 2019 թվականի N 815-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Մելանյա Կորյունի Արզումանյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 1-ին թաղամասի թիվ 42-43 հասցեի հողակտորում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ հեղուկ գազի ավտոմոբիլային լցակետի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Մելանյա Կորյունի Արզումանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 13
գ. Ջրվեժ